



«ՆՈՐ ՍԵՐՈՆՆԴ»
ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ

«NEW GENERATION»
HUMANITARIAN NGO

ԺԱՄԱՆԱԿԻՆ

14

3.1.2016

ՀԱՄԱՔԱՅԼ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- ❖ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ
- ❖ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ
- ❖ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴԻՄՈՒՄՆԵՐ
- ❖ ՁԵԿՈՒՅՑՆԵՐ



«ԱՂՋԻԿԸ ԴԱՆԻԱՅԻՑ ՖԻԼՄԻ ԴԻՏՈՒՄ ԵՒ ՔՆՆԱՐԿՈՒՄ»



2016 թ.-ի փետրվարի 4-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն կազմակերպեց «Աղջիկը Դանիայից» ֆիլմի ցուցադրությունը: Ֆիլմի դիտումը և հաջորդած քննարկումը բուռն էին և

լեցուն տարակարծիք մտքերով: Մասնակիցները կարծիքներ փոխանակեցին ֆիլմի, վերջինիս դերասանական կազմի, դերասանների խաղի, ֆիլմի բարձրացրած թեմայի ու խնդրի, ինչպես նաև Հայաստանում ԼԳՏԻ, մասնավորապես տրանսգենդեր անձանց խնդիրների մասին: Թեև հնչեցին նաև քննադատական կարծիքներ ԼԳՏԻ անձանց և սեռափոխության մասին, սակայն քննարկման ավարտին տիրապետող էր այն կարծիքը, որ հասարակության բոլոր անդամները, ներառյալ ԼԳՏԻ անձինք և այլ խոցելի խմբեր, հավասար իրավունքներ և հնարավորություններ պետք է ունենան, ինչը ցանկացած ժողովրդավար երկրի որդեգրած քաղաքականությունն է մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում: Հավելենք, որ ոմանք քննադատել էին ՀԿ-ի նախաձեռնությունը՝ անգամ վերջինիս ֆեյսբուքյան էջում գրառելով՝ «Եվ դուք սրանո՞վ եք Նոր սերունդ դաստիարակում», մինչդեռ ֆիլմի դիտումը մեծ հաջողություն է ունեցել՝ իր շուրջը համախմբելով տարբեր բուհեր, հասարակական և այլ կառույցներ ներկայացնող շուրջ 40 երիտասարդների:



«Որ ես՝ Լիլին, իրական եմ և ունեմ ապրելու իրավունք, ապացուցել եմ՝ ապրելով 14 ամիս», - գրել է Լիլին իր օրագրում: «Կարող եմ ասել, որ այդ 14 ամիսները շատ կարճ ժամանակահատված են, բայց ինձ համար դրանք ամբողջական ու երջանիկ կյանք են»: Պատմության մեջ առաջին կին-տրանսգենդեր Լիլի Էլբայի դերը խաղում է Էդի Ռեդմենը:

ՔԱՌՕՐՅԱ ԴԱՍԸՆԹԱՑ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԵՒ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ



Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն փետրվարի 10-13-ը Գյումրիում իրականացրեց «Խոցելի խմբերի հիմնախնդիրների իրազեկում և խտրականության արգելք՝ հանուն ժողովրդավար հասարակության» քառօրյա դասընթացը, որին մասնակցեցին 11 ներկայացուցիչներ ՀՀ Քրեակատարողական վարչությունից և «Նուբարաշեն»-ի, «Կոշ»-ի, «Արթիկ»-ի, «Արմավիր»-ի, «Սևան»-ի, «Աբովյան»-ի ու «Վանաձոր»-ի քրեակատարողական հիմնարկներից:

Չորս օրերի ընթացքում մասնակիցները

ուսումնասիրեցին «Խոշտանգումների կանխարգելում / Ստամբուլյան արձանագրություն», «Փոքրամասնությունների նկատմամբ խտրականության դրսևորումներ, կանխարգելման և պայքարի միջոցներ», «Խտրականության արգելքը միջազգային և ՀՀ կողմից վավերացված փաստաթղթերում», «Մարդու իրավունքներ / համընդհանուր հասկացություններ, սահմանումներ, տեղական և միջազգային օրենսդրություն» և «Խոսքի ազատություն և ատելության խոսք» թեմաները:

Դասընթացն իրականացվել է «Օրենքի գերակայությունը հանուն փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանը Հայաստանում» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Վրաստանում Նիդեռլանդների Թագավորության դեսպանատան կողմից:

ԴԱՍԸՆԹԱՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ



«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն փետրվարի 16-ին «Մարդու իրավունքները հանուն բազմազանության և հավասարության» ծրագրի շրջանակներում իրականացրեց «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա»-ի վերաբերյալ դասընթացը, որին մասնակցեցին 20 երիտասարդներ Երևանի տարբեր բուհերից, հասարակական և այլ կառույցներից:

Դասընթացը վարում էր «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի իրավաբան Արթուր Մակարյանը:

Մասնակիցները նախ ուսումնասիրեցին «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան (ՄԻԵԿ/ECHR)»: Այնուհետև անդրադարձան ՀՀ կողմից վավերացրած մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային կոնվենցիաներին: Դասընթացավարը ներկայացրեց նաև մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումները խտրականության հենքով պայմանավորված գործերում:

Մասնակիցները շնորհակալություն հայտնեցին կազմակերպիչներին՝ ապագայում նմանատիպ դասընթացներին մասնակցելու պատրաստակամություն հայտնելով:

ՔՆՆԱՐԿՈՒՄ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՆԱՁՈՐՈՒՄ



Փետրվարի 19-ին «Նոր սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն «Օրենքի գերակայությունը հանուն փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանը Հայաստանում» ծրագրի շրջանակներում Վանաձորի ՀԿ կենտրոնի միջացառումների դահլիճում կազմակերպել է քննարկում «Այլընտրանքային զինվորական ծառայության մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ:

Քննարկման նպատակն էր բարձրացնել հանրության իրազեկվածության մակարդակը օրենսդրական համապատասխան փոփոխությունների միջոցով խոցելի խմբերի իրավունքների պաշտպանության մեխանիզմների ստեղծման վերաբերյալ: Քննարկման բանախոսն էր Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահ, իրավապաշտպան Արթուր Սաքունցը:

Քննարկմանը ներկա էին ներկայացուցիչներ Վանաձորի տարածքային զինվորական կոմիսարիատից և հասարակական կազմակերպություններից: Քննարկման մասին [հոդված](#) է տպագրվել «Լուռու մարզ» թերթի փետրվարի 24-ի թիվ 13 համարում:



ՔՆՆԱՐԿՈՒՄ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀՐ ՕՐԵՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ



2016թ.-ի փետրվարի 19-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն Գյումրիում կազմակերպել էր քննարկում՝ խոցելի խմբերի իրավունքների պաշտպանությանը նպաստելու մեխանիզմների վերաբերյալ: Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահ, իրավապաշտպան Արթուր Սաքունցը նշեց, որ քննարկումը շատ կարևոր է, քանի որ այն իրազեկում է խոցելի խմբերի խնդիրների և դրանց լուծման

հնարավոր ուղիների մասին:

Քննարկման վերաբերյալ տեսանյութեր են հեռարձակվել Գյումրու «ՑԱՅԳ» և Շիրակի մարզային հեռուստաընկերության լրատվական ծրագրերով:

ԴԱՍԸՆԹԱՑ ՄԻԱՎ-Ի ԵՒ ՁԻԱՐ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՒ ՄԻԱՎ-Ի ԹԵՍԱՏՎՈՐՄԱՆ ԿԱՐԵՒՐՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ



2016թ.-ի փետրվարի 24-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ իրականացրեց «ՄԻԱՎ-ի և ՁԻԱՐ-ի կանխարգելումը և ՄԻԱՎ-ի թեստավորման կարևորությունը» թեմայով դասընթաց:

Դասընթացի նպատակն էր բարձրացնել երիտասարդների տեղեկացվածությունը ՄԻԱՎ-ի և ՁԻԱՐ-ի վերաբերյալ:

Դասընթացը վարում էր «Նոր Սերունդ»

Մարդասիրական ՀԿ-ի նախագահ Սերգեյ Գաբրիելյանը:



Դասընթացի ընթացքում մասնակիցները ծանոթացան ՄԻԱՎ և ՁԻԱՐ տերմիններին, ՄԻԱՎ-ի և ՁԻԱՐ-ի տարբերությանը, փոխանցման ուղիներին և կենսական հեղուկներին, պահպանակների ճիշտ օգտագործմանը և ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն անցնելու կարևորությանը:



Միջոցառումն ուղեկցվեց ինտերակտիվ խաղերով և վարժանքներով, որի ավարտին ցուցադրվեց ՄԻԱՎ-ի կանխարգելման և հետազոտության կարևորության մասին **«Վերաբերում է անգամ նրանց, ում թվում է, թե չի վերաբերում»** տեսահոլովակը, որը «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն թարգմանել է հայերեն:

Դասընթացն իրականացվեց «ՄԻԱՎ-ի և ՁԻԱՐ-ի կանխարգելումը և տեղեկացվածության մակարդակի բարձրացումը SUS-ների շրջանում» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է «Առաքելություն Արևելք» ՄՕԿ հայաստանյան մասնաճյուղի կողմից՝ ՁԻԱՐ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամի ֆոնդերից:

ՄԵՆՔ ԿԱՆՔ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐՆԵՐ



«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն ֆինանսավորում է «Մենք Կանք» ծրագիրը, որը իրականացնում է «Իրավունքի Կողմ» Իրավապաշտպան ՀԿ-ն:

Ծրագրի շրջանակներում «Իրավունքի Կողմ» Իրավապաշտպան ՀԿ-ն 2016թ.-ի հունվարի 24-ին իրականացրել է Ֆլեշ-մոբ: Ֆլեշ-մոբի նպատակն էր իրազեկել հասարակությանը, որ տրանսգենդեր անձիք կան և նույնպես մեր հասարակության լիիրավ անդամն են:

Ֆլեշ-մոբը տեղի է ունեցել Երևան քաղաքի Հյուսիսային պողոտայում, որտեղ նախաձեռնության մասնակիցները տարածել են փուչիկներ, որոնց վրա գրված էր. ,Մենք Կանք. Տրանսգենդերներ:



«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն գրուցել է «Իրավունքի կողմ» Իրավապաշտպան ՀԿ-ի նախագահ Լիլիթ Մարտիրոսյանի հետ:

- Ո՞րն էր «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի ստեղծման նպատակը:

Հայաստանի Հանրապետությունում կան կազմակերպություններ, որոնք աշխատում են ԼԳՏԻ անձանց խնդիրներով, սակայն կա կրկնակի թիրախավորված Տ խումբը՝ տրանսգենդեր անձինք: Տրանսգենդերները ավելի խոցելի են իրավական, հոգեբանական, սոցիալական և այլ տեսանկյուններից:

«Իրավունքի Կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի ստեղծման ամենաառաջնային նպատակն է զբաղվել տրանսգենդեր անձանց խնդիրներով:

Ես՝ ինքս, լինելով համայնքի ներկայացուցիչ, ինքս լինելով տրանսգենդեր անձ՝ հասկանում եմ, թե ինչքան բացթողումներ կան մասնավորապես իրավական դաշտում՝ ոստիկանության, պետական այլ մարմինների, անձնագրերի հետ կապված ու բազում այլ ոլորտներում: Հոգեբանական տեսանկյունից ևս խնդիրներ կան: Տրանսգենդեր անձինք ունեն ընտանիքի կողմից, հասարակության կողմից, պետական մարմինների կողմից անարգված վիճակ:

Կազմակերպության բուն նպատակն է իրավական դաշտում պաշտպանել տրանսգենդեր անձանց իրավունքները տեղական և միջազգային մակարդակով:

2016թ.-ի փետրվարի 11-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն հրապարակել է «Տրանսգենդեր անձանց սեռափոխության կարիքները. իրավական խոչընդոտների գնահատում» զեկույցը, որի պատրաստմանը իր անմիջական աջակցությունն է ցուցաբերել «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն:



«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն 2016 թ.-ի փետրվարի 4-ին հրապարակել է «իրավունք թերթը և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները» հոդվածը, որում մասնավորապես ասվում է. «իրավունք թերթի 15.01.2016թ-ի թիվ 2 համարի 16-րդ էջում հրապարակված հոդվածը մարդու իրավունքների կոպիտ խախտման դրսևորում է, որը ցայտուն կերպով ոտնահարում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները:

2016 թ.-ի փետրվարի 5-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն հանդես է եկել հայտարարությամբ /ՏԵՄ «Ահարոնյանի սպառնալիքը դատապարտելի է»/, որով դատապարտել է «Հայաստանի սոցիալիստական շարժում» կուսակցության ղեկավար Ռոբերտ Ահարոնյանի կողմից արված սպառնալից հայտարարությունները՝ ուղղված Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցին:



ընդունելը մերժել է:

ՀՀ Վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/2146/02/14 քաղաքացիական գործով 2016թ. հունվարի 20-ի ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.10.2015 թվականի որոշման դեմ Գրիգոր Գևորգյանի, Արման Սահակյանի և Հովհաննես Մկրտչյանի ներկայացուցչի բերած վճռաբեկ բողոքը ընդդեմ իրավունք թերթի վարույթ



2016թ.-ի փետրվարի 23-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն դիմում է ուղարկել ՀՀ Փաստաբանների Պալատի նախագահ Արա Չոհրաբյանին փաստաբան Գարիկ Գալիկյանի նկատմամբ կարգապահական վարույթ իրականացնելու վերաբերյալ: Դիմումում մասնավորապես նշվում է. «...սույն թվականի փետրվարի 19-ին «A-TV» հեռուստաընկերության եթերով



հեռարձակված «Կիսաբաց լուսամուտներ» հաղորդաշարի հյուրը «Գալիկյան» փաստաբանական ընկերության տնօրեն՝ փաստաբան Գարիկ Գալիկյանն էր: Տվյալ հեռուստաեթերի ժամանակ քննարկվում էր ՀՀ քաղաքացի Էդգար Կարապետյանի աշխատանքի չընդունվելու հանգամանքը՝ պայմանավորված նրա սեռական կողմնորոշմամբ, որտեղ որպես փորձագետ իր մասնակցությունն էր ապահովել փաստաբան Գարիկ Գալիկյանը: Իր տեսակետը հայտնելու ժամանակ նա հանդես է եկել հրապարակային վիրավորական արտահայտություններով և փաստաբանին ոչ հարիր բառապաշարով, որի ընթացքում նա մասնավորապես ասել է. «...ես պայքարել եմ իրանց դեմ, պայքարում եմ ու պայքարելու եմ: Երբ տեսնեմ, տրորելու եմ, ոտնատակ եմ տալու ու պետք է վառել, այո... դուք գիտեք իրա նմանների պատճառով բերդերում էսօր ինչքան մարդ ա փթում... այո, միշտ տրորել եմ, տրորելու եմ ու գնալու եմ տենց էլ առաջ: Կարող եք իմ վրա քրեական գործ հարուցել... ինչ ուզում եք, արեք»:

ՀՐԱՏԱՐԱԿՎԱՆ ԶԵԿՈՒՅՑՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ



«ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԱՆՁԱՆՑ ՍԵՌԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԸ. ԻՐԱՎԱԿԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ»

«Տրանսգենդեր անձանց սեռափոխության կարիքները. իրավական խոչընդոտների գնահատում» հետազոտությունն իրականացվել է «Օրենքի գերակայությունը հանուն փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության Հայաստանում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացնում է Նոր Սերունդ

Մարդասիրական ՀԿ-ն Կրաստանում Նիդերլանդների Թագավորության Դեսպանության աջակցությամբ:

Հետազոտությունը նպատակ ունի պազելու տրանսգենդեր համայնքի շրջանում սեռափոխության խնդրին առնչվող կարիքները, դրանց բավարարման խոչընդոտները (ինչպիսիք են օրինակ իրավական-օրենսդրական բացերը), դրանց հետևանքները և տրանսգենդեր համայնքի խնդիրների համակարգային լուծման նախընտրելի ուղիները: Հետազոտության օբյեկտը ՀՀ տրանսգենդեր համայնքն է, և հետազոտությունն առնչվում է այդ խոցելի ու հասարակական կյանքում քիչ նկատելի խմբի կարիքներին:



ԼԳՏԲԻ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԱՌՑԱՆՑ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ

2015թ.-ի մայիսի 1-ից նոյեմբերի 20-ն ընկած ժամանակահատվածում կատրավել է **հետազոտություն** ՀՀ առցանց տիրույթում ԼԳՏԲԻ անձանց նկատմամբ վերաբերմունքի ու նրանց իրավունքների ոտնահարման դրսևորումների վերաբերյալ: Հետազոտությունն անցկացվել է «Մարդու իրավունքները հանուն

բազմազանության և հավասարության» ծրագրի շրջանակներում, որն իրականացնում է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն Նորվեգիայի Հելսինկյան կոմիտեի ֆինանսական աջակցությամբ:



«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն Բաց Հասարակության Հիմնադրամներ / Հայաստան կազմակերպության կողմից ֆինանսավորվող «Երիտասարդները ընդդեմ խտրականության» ծրագրի շրջանակներում հրատարակել է **«ԻՆՁ» Է խտրականությունը** տեղեկատվական բրոշյուրը:

